ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 մարտի 2024թ.

Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Տարոն Վարդանյան

Անդամներ՝ Սեդրակ Կիրակոսյան, Հայկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերի շտկման մասին**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած «ՏՆՄ» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունների շտկման նպատակով՝ 22.03.2024թ.-ին կայացած նիստով գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել. հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 N 526-Ն որոշման 41-րդ կետը, 1 աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և «ՏՆՄ» ՍՊԸ-ին տալ փաստաթղթերի շտկման հնարավորություն:

2. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգի շտկված փաստաթղթերի գնահատման մասին.**

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի փաստաթղթերի շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ավարտից հետո, գնահատող հանձնաժողովը, գնահատեց «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

ա/ «ՏՆՄ» ՍՊԸ-ն շտկել է դիմում-հայտարարությունում հրավերի 4.3 կետի 1-ին մասի ե/ ենթակետով սահմանված N 1.3 հավելվածը, որտեղ նշվել է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայք էջի հղումը:

բ/ «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «ՏՆՄ» ՍՊԸ-ի և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի միջև 08.02.2024թ.-ին կնքված համատեղ գործունեության պայմանագիր, որը գործում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում:

2.2 Հաշվի առնելով վերը նշվածն՝ արձանագրվել է, որ Մասնակից՝ «ՏՆՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է բոլոր անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Մասնակից «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

3. **Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակիցներին որոշելու և հայտարարելու մասին.**

3.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ՏՆՄ» ՍՊԸ-ին, որը «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ի հետ հանդես է գալիս համատեղ գործունեությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. **Պայմանագիր կնքելու որոշման մասին.**

4.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, ըստ որի «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/30» ծածկագրով գնման ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.2 Ընտրված՝ հաղթող, մասնակիցների հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Տ. Վարդանյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Ս.Կիրակոսյան**

_____ **Հ. Հովհաննիսյան**